



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 30

ՇԱՐԱՐ

23 ՅՈՒԼԻՍ 1905

Կ. ՊՈԼՏՈՅ ՀԱՄԱՐ	ԳՈՒՌՈՒՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՏԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ձր.
Վեցամսայ 25 »	Վեցամսայ 27 »	Վեցամսայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՂԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճիշտ Պոլիս խանին սալ, Թիւ 16

Մանաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն բերել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղիկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները շեմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ Զեւիթը՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — Զեւիթ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հասր 40 փարս

ԱՐՏՈՂԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՂԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապր-Ալի հասրէսի Թիւ 23



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տալտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅՍ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԱՔԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՍՏԱՐ | (2. Զարչը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ
343 կրկին , Տիւղօլլուի տունը :

ՖԷՆԻՔՍ ՕՔՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ.

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Քրանֆ

ՀԲԴԵՂԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Քրանֆ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային
կանքի վրայ:
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողինաւի՝ եւ ա-
ռագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ՔԻԷՏԻ ԼԻՕՆԷ , Ընդհանուր գործակալութեան գրասեն-
եակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16 :

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիազօր Գերկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ




ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏԵՐԻՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՂ 30

ՇԱԲԱԹ

23 Յուլիս 1905



Մ. Ի. Բ. Զ. Ի. Զ.

Թ Է Ո Դ Ի Կ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԻԶՄԻՐՆԱՆՅ ՅԱՆԶՆԱԺՈՂՈՎԷՆ ԱՌԱՋԻՆ ՄԻՑԱՆԱԿՈՎ

ՔԻՉ Մ'ԱԼ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ BOVININE

Առ հասարակ ծնողք կը գանգատին իրենց պղտիկներուն հանդէպ, առաւելելով թէ՛ քրօնիկ տկարութիւն մը, անարիւնութիւն, դալիւթիւն, և ակտիւ ժալի պակասը զգալի կերպով կը վարակէ իրենց ձագուկները, և առ այս աւանդ ծովին, իսկ ձմեռը ձկան իւղին կսպասեն, անոնցմէ յուսալով՝ ոյժը, կայտառութիւնը և մէկ բառով ամբողջ կեանքը զաւակներուն: Բժիշկները, մինչև հիմա սովոր էին եփսքոէ Շլիւս քր ֆինֆինա, կըլսեոս Վոսմար, եփսքոէ մարդեր և նմանօրինակ այլ և այլ քիմիական բաղադրութիւններ ունեցող դեղեր տալ այդ կարգի տկարակազմներուն, որոնց արդիւնքէն թէև քիչ շատ նպաստուոր, սակայն հիմնական և ակնյայտնի բուժում մը կարելի չէր ըլլար ձեռք բերել:

Վերոյիշեալ տկարութիւնները ոչ թէ միայն տղայոց, այլ նոյն իսկ չափահասներուն և ծերերուն վրայ ալ նշմարուելով, կրնայ ըսուիլ թէ առ հասարակ ստամոքսի խանգարում, ուժաւորութիւն, դարձութիւն, ախորժակի խաթարում, անարիւնութիւն, չղային խանգարում, և նմանօրինակ տկարութիւններ զրեթէ հարկւրին քսան բացառութեամբ կը նեղեն ամէն հասակէ անհատները:

Վերոյիշեալ տկարութիւնները թէև ինքնին վտանգաւոր հանգամանք մը չունին, բայց երբ մոռանք թէ, ամէն մարդ կը փափաքի կերածը շուտով մարսելու, դէմքը պայծառ գոյներ ունենալու, ուժով ոսկորներ, և առողջ կազմ մը վայելելու, և ինչ, այն ատեն խնդիրը կը լուծուի ինքնին և ի յայտ կուգայ սա ճշմարտութիւնը թէ, առողջ մարմին մը ունենալ կեանքի անհրաժեշտ մէկ պէտքերն է:

Սմբիկացի դիտողները, որոնց գործն է աշխատիլ մարդկութեան բարւոյն համար, և օգնել ըստ կարելոյն իրենց եղբայրներուն, յղալով են կտրեւորաբոյն մասնաւոր դեղ մը (սքէսիլալիք) որ երեսուն տարիէ ի վեր փորձուած, հաստատուած և ընդ ունուած է բժշկական աշխարհէն, և այսօր շնորհիւ այդ մէկհատիկ պատրաստութեան՝ կտրելի եղած է առաջը առնել, այն կարգ մը տկարութիւններուն, որոնց տեսակը վերը յիշեցինք արդէն:

BOVININE

Ահա անունը այդ բանասէին, որ կարող եղած է փայլուն յաղթանակը տանիլ նոյն նպատակին ծառայող հազարաւոր ուրիշ պատրաստութիւններու մէջ և արժանանալ ընտրեալ բժիշկներու մեծ թիւի մը դնահատումին, որոնք նախընտրելով զայն ունենէ կաղուարիչ և շինիչ դեղերէ, կը յանձնարարեն նոյնիսկ տղայոց փոքր տարիքէն իբր միակ անմիջապէս անուշ, փոխանակ կարգ մը ալիւրային պատրաստութիւններու, որոնց անպես արդիւնքները յաճախ կը պարզուին մեր առջև:

Հետաքրքրական և միևնոյն ատեն օգտակար գիտելիք մը ըլլալուն, հոս համառօտակի բացատրեմք Bovinineի բաղադրութիւնը և անոր պատրաստութիւնը:

Երբ կարեւոր դեղի մը համար կը բանանք մեր խմբագրական սիւնակները, ասով կը յուսանք օգտակար ծառայութիւն մը մատուցած ըլլալ մեր գերազնիւ ընթերցողներուն, յուսալով թէ՛ կրօնական, եկեղեցական և կրթական հարցերէն և կամ անոնցմէ ալ պիտանի կրնան ըլլալ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆՆԵՐԸ:

Bovinineը պատրաստելու համար Շիգակօի մէջ կոյ հսկայ շէնք մը, իր յարակից մասնաճիւղերով, ուր կաշխատին հաշարներով գործաւորներ, վաթսուն անասնաբոյժերու հսկողութեան տակ:

Թէ ի՞նչ է Bovinineը:

Ձուտ միսի, եղան միսի, անոր ուղեղին և ոսկորներու ծուծին հիւթը զըտուած, տարրալուծուած և հասուցուած այն աստիճանին, ուր մսի հիւթ մը ըլլալէ դադրած, լոկ նիւթ մը, սքանչելի դեղ մը դարձած է:

Երեւակայեցէք հազարաւոր եղներ, կովեր, որոնք կը սնուցուին անասնաբոյժերու հսկողութեամբ և անոնց սիւթէմով: Եղները կը սնուցուին ատեն մը պէտք եղած կերպով, ու երբ հասնին իրենց հասուն տարիքին 2 կամ 3, այն ատեն մասնաւոր կիրարկումով մը նոյն այդ եղները կ'ենթարկուին այն տեսակ զօրաւոր և յաջորդական պատուաստումի մը, որուն հետեւանքը կ'ըլլայ սոսկալի ջղային ոյժ մը, ոսկորներու արագ զարգացում մը, և վերջապէս կենդանին կարճ միջոցի մը մէջ իր նախկին վիճակին կրկին զօրութեան և ծաւալին կը հասնի: Ահա այս պարագային է որ անոնք կը մտնեն, և իրենց ամբողջ ոսկրային կազմածին պարունակած ֆօսֆաթները, ուղեղին և ողնաժուծին հիւթը ևն. պաղ վիճակի մէջ, առանց եփուելու, պատրաստութեան մասնաւոր եղանակաւ մը կ'առնուին, և հեղուկը կրկին և կրկին զտուելէ և մէջի ֆոսֆատային տարրերը վտարուելէ վերջ խտացեալ վիճակով մը կը հասնի մասնաւոր և վերջին զտարան մը, ուր ամփոփուելով կը պատրաստուի այն համեղ, կազդուրիչ, զօրաւոր հեղուկը, որ Bovinine անունով այսօր Ամերիկայի, Ճապոնի, Չինու, և ամբողջ Եւրոպայի բժշկական աշխարհէն ընդունուած և բոլոր հիւանդանոցներու մէջ անոր գործածութիւնը անհրաժեշտ պէտք մը դարձած է:

Ձուտ կենդանական և ոչ թէ քիմիական այս ընտիր բաղադրութիւնը անգամ մը գործածելը կարծէ հաստատելու համար անոր մէկհատիկ շինիչ գերը առողջութեան մէջ:

Ես ոչ թէ իբր խմբագիր, այլ իբր զաւակաց հայր, նոյն իսկ փորձով հաստատած ըլլալովս, պարտ անձին կը համարիմ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել Մեծ. Արդարեան Եղբայր (droguiste Պահչէ-Գաբու) որոնց շնորհիւ ծանօթացայ այս բնորոշագոյն բանասէին:

Արդարեան էֆէնտի առեւտրական գործով Ամերիկա գտնուած միջոցին համբաւ վայելող կարգ մը բժիշկ բարեկամներու գրգռումով այցելած է Պոլիմիլն ընկերութեան Նիւ-Եօրքի գրասենեակը, ինչպէս նաև Շիգակօի ֆապուրքը, և մօտէն համոզուելով Bovinineի առաջնակարգ և շինիչ հանգամանքին վրայ, ինքը անձամբ խնդրած է որպէս զի Թուրքիոյ ընդհանուր ներկայացուցիչը ըլլայ ինք, որպէս զի անոր օգուտը տարածուի ամենուրեք յանուն մարդկութեան:

Ջերմապէս կը յանձնարարենք մեր գերազնիւ ընթերցողներուն, մանաւանդ բժշկական գասակարգին, որպէս զի փորձեն Bovinineը և անձամբ համոզուին անոր նեկտար մը ըլլալուն բժշկական աշխարհին մէջ:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՄԵՐ ՇԻՖՈՆՆԵՐԸ

Գլուխները թէյն ու զոնկաքի անուշահոտ չոգիներով տաքցրել էին, Տիկին Բ. ին սրահին մէջ, ուր ամփոփուած էինք այդ գիշեր զուարթ և հաճոյալի ժամանցի մը համար բոլոր ծանօթ բարեկամներ, այնպէս որ անկարելի էր երկսեռ այդ հաւաքոյթին մէջ հեռաւոր կոչնական մը նշմարել:

Երիտասարդներու և աղջիկներու սիրուած մեր ընկերութիւնը Տիկին Բ. ին ներկայութիւնը վայելելու սովորական փափաքէն աւելի՝ մեր միջև յառաջ բերուելիք սիրուն ու փնտուռած քոզրուի մը համար այդ օգին կոխկռտել տուած էր մեզի ձեռնին կակուղ ճերմակութիւններուն վրայ, զիշերանց, մինչև հոգ, և այս բանը չէինք ծածկած արկինն որ զոնկաքի կ'ունկնդրէր մեր անկեղծութիւններուն ու մենք չափաքը կ'առտակէր մինեան թաթիկներով՝ որոնք որ աւելի առաջ նետուած էին համարձակախօս ըլլալու համար, համարձակութիւն մը սակայն, որ անմեղ ըլլալ կը թուէր որքան կատակաման ճշմարտութիւն մը, և ներելի իր այդ հանգամանքով:

Կան նկարագիրներ, որոնց համար տանելի է նոյն իսկ կոչուութիւն մը անկեղծութեան զրմակով փրկուած. ատոնցմէ էր Տիկին Բ.: Ըսել մինչև անգամ իրեն լրջութեամբ՝ թէ ա՛յնքան քիչ կ'երթային իրեն իր գեղին Ծովագիւղները, գգուել պիտի ըլլար զանոնք ծաղիկներու թերթերով: Իր առողջ նկարագրին մէկ թելն ալ անկեղծութենէն հետևող՝ բարեկամներուն նկատմամբ ունեցած իրաւ սէրն էր, որով միշտ կ'ուզէր անոնցմէ շրջապատուած ըլլալ, մանաւանդ ձմրան երկար գիշերներ, որ ատեն քանիցս առիթը կ'ունենայինք մեր թէյն-շաւիկներուն ձեռքը սեղմելու իր սրահին մէջ ու ամէն նիւթէ ճառող լեզուներ զրտնելու, բան մը որ այնքան հաշուազրու է միշտ մեր վայելած ընկերութիւններուն մէջ:

Ինչպէս ամէն անգամ նոյնպէս և այս գիշերուան համար անակնկալներ ունեցանք՝ որոնք տան տիկնոջ գեղեցիկ զլխուն մէջ հիւսուած էին, ա՛յնչպիսի եղական ու թարմ՝

Մեր գրական ասուլիսին նախ սեռը կաղ-

մեց երգիծաբանութիւնը և առաջին նիւթը որ մէջտեղ նկատուեցաւ, Ալիիարի գլուխն էր, ապահովաբար ոչ վրան փափկութեամբ զլխարկ մը զետեղելու կնկան թաթիկներով, բան մը որմէ թերեւս պատճառ ունենայ հաճոյք չղգալու... և որ մեր լուրջ նպատակէն դուրս էր բոլորովին. կ'ուզէինք բաղդատութիւն մը ընել Փափաղկանի և իր միտքին մէջ, և որովհետև ամէնքս ալ սիրող էինք այդ երկու կատակի մարդերը, բոլոր նպատակաւ կարծիքները խլիցին, Ալիիարը մղուելով աւելի դէպի Միջօրէականի բնակչութեան մը ծոցը, իր փրանսական էսթետիկ գրկած, իսկ Փափաղկանը՝ մեր համայնքին իսկատիպ զիծերուն մէջ:

Հետզհետէ ծայր առնելով դեղարուեստական ու բնկերական զանազան վիճարտութիւններ, միշտ մի և նոյն տաքութեամբ, կ'ըլլար որ կիներս ուժեղ փաստեր մէջ կը բերէինք և կ'ըլլար որ իրենք, և ընդհանուր ծափիկներու մէջ կ'արտասանուէր վերջին խօսքը:

Այս պարագան այնպէս մը բերաւ որ սեռերու մէջ պատ մը կանգնի, և ահա մեր սեռը բոլորովին առանձին դէմ առ դէմ դուստնք հակաճառելու անոնց հետ՝ որ օր մը կնոջ մը կէսը պիտի կազմէին: Ամենէն կըրակոտը եղաւ իրենց մէջ համարձակախօս մը, որ մտերիմ յանգընութեամբ մը առաջաբից հարցում մը մէջ նետել որոնց պիտի պատասխանէինք բոլոր կիներս, մեզի տըրուած թղթիկներով: Հարցումը մէկ էր բացարձակապէս և ամէնուս ուղղուած:

« Ի՞նչ կ'արժեն ձեր շիֆոնները »:

Հասկցողութեան համեմատ թեր ու դէմ կարծիքներ շատ կարգացուեցան, մեծամասնութիւն մը նոյն իսկ մեր մէջէն « Ոչինչ » պատասխանած էր, կարծես տեղակ մը իրերահաղորդութեամբ. և թէպէտ այս մէկը քանիին դէմ կային աւելի սիրուն պատասխաններ, բայց ինչ որ ամէնուն մատ խածնել տուաւ, հետեւեալ արամիտ նախադասութիւնն էր որ ստորագրուած ալ էր, հակառակ նախապէս զրուած արդիւթիւն:

« Մեր շիֆոնները, Պարոններ, ձեր դատողութիւնները կ'արժեն յաճախ, երբ իրենցմով կը խաբուէք... »:

ՀԱՅԿԱՆՈՅՑ ՄԱՌԻ

ՕՏԱՐ ԷՋԵՐ

ՏԵՐԻԻՇԵԹ

Մարդու մարմինը՝ իր իսկութիւնը ծածկող դրսերեւոյթ մըն է լոկ, որ լոյսին կամ ստուերին վրայ կը ստուարանայ: Իրականը՝ հոգին է: Ճիշդը ըսելով՝ դիմակ մըն է մեր դէմքը: Ճշմարիտ մարդը մարդուն մէջ եղածն է: Միւս ըստած սա պատրանքին ետեւ պատասխարուած ադ մարդը թէ որ տեսնուէր, հաճելի անակնկալ մը պիտի ըլլար: Արտաքին արարածը իրական էակի մը տեղ ընդունիլը՝ ընդհանուր մոլորութիւն մը եղած է: Սա ինչ աղջիկը, օրինակի համար, թէ որ երեւէր ինչպէս որ է, թռչնիկ մը պիտի թուէր . . .

Աղջիկի մը ձեւը ունեցող թռչնիկէն աւելի անմեղ ինչ կայ: Սեպէ թէ քովիկդ ունիս: Ատ ալ Տէրիւշէթն ըլլայ: Փափկանո՛ւ էակ, կը փորձուիս իրեն ըսելու: Բարի՛ լոյս, օրիորդ տուարժիկ (bergeronnette), թեւերը չեն տեսնուիր, բայց ճշուողիւնը կը լսուի: Միշտ կ'երգէ: Շաղփաղփովը՝ մարդէն վար, երգո՛ւի ալ՝ անկէ վեր է: Աղ երգին մէջ խորհուրդ կայ: Կոյսը՝ հրեշտակի մը պահարանն է: Երբ կին ըլլայ, հրեշտակը կը մեկնի, բայց վերջը կը վերադառնայ՝ մայրենի գողտրիկ հոգի մը բերելով: Կեանքի ադ միջոցներուն, մայր ըլլալիք աղջիկը, երկար ատեն, աղայ մըն է: Մանկամարդ օրիորդին մէջ դեռ կը յարատեւէ մատաղ աղջիկը: Ա՛լ չիկանաւ մըն է: Տեսնելուդ պէս կը մտածես: Որչա՛փ աղուոր կ'ըլլայ, թէ որ չթռչի, Բնտանի աս վեհանոյշ հոգին, տունին մէջ, ուղածը կ'ընէ: Ճիւղէ ճիւղ, այսինքն սենեակէ սենեակ կը մանէ կ'ելլէ, կը մօտիկնայ, կը հեռանայ, փետուրները կ'ողորկէ, կամ մաղերը կը սանտրէ, ամէն տեսակ գողտր ու թեթեւ աղմուկներ կը հանէ, և ականջէդ վար, չգիտես ինչ անձառ բաներ մը կը մըմնջէ: Ան կը հարցնէ՝ դուն կը պատասխանես: Դուն կը հարցնես՝ կը դեղձեղէ՛ անի: Կը խօսիս հետիկը: Շաղկապատելը՝ շունչ առնել է: Աս էակը՝ երկինքն ունի իր մէջը: Կապոյտ մտածումն է ասի, խոհերուդ խառ-

նուած: Դո՛հ ես, ա՛տչափ թեթեւ հոգի, ա՛քքան խուսափուկ ըլլալով մէկտեղ, աներեւոյթ չըլլալ հաճելուն, քանի որ կրնար անշուշտիւի ալ ըլլալ: Աշխարհքի վրայ սիրունը՝ կարեւորն է: Ու հրապուրիչ ըլլալու պաշտօնէն կարեւոր դորձ չի կայ: Անտառ, առանց մեղուահաւի պիտի վհատէր: Յինձ՝ ծառալել, երանութիւն ճառագայթել, մութին լոյս սփռել, ներդաշնակութիւն, աղնութիւն, շնորհք ըլլալ, ասոնք ճառայութիւն չեն: Ինձի համար աղէկ է աղուորը՝ դեղեցիկ ըլլալուն: Ասանկ արարած մը, զինք չըջապատողներուն, հրապուրիչ ըլլալու հմայքը ունի, առանց ինքը գիտնալու, բան մը որով աւելի տիրող կ'ըլլայ: Իր ներկայութիւնը լոյս կ'արձակէ, մօտենալն ալ կը հրահրէ: Երբ անցնի դո՛հ կ'ըլլաս: Կ'երջանկանաս թէ որ կայնի: Անոր նայիլը ապրիլ է: Մարդկային կերպարանքին տակ, արչալոյսն է ա՛ն: Դրա՛խտ կը դառնայ տունը, եթէ ինք գտնուի: Իր մարմինին բոլոր ծակտիքներէն եղեմ կը բուրէ: Ու աս սքանչացումը, առանց ճիւղի, կը բաժնէ ամէնքին, հերիք է որ քովերնին ըլլայ: Ունենալ ժպիտ մը, որ չգիտես ինչպէս մարդերու կրած հոգերուն ահարկու ծանրութիւնը կը թեթեւցնէ: Այս մասին ինչ կ'ուզէիր որ ըսէի: Երկնային է պարզապէս: Տէրիւշէթ՝ ինչքն ատ ժպտալ: Աւելին ըսեմ, ատ ժպտալ՝ Տէրիւշէթ ինքն էր: Բան մը կայ, որ մեղի կը նմանի մեր դէմքերէն աւելի, մեր դիմագիծն է, մեր դիմագիծէն աւելի մեղի նմանող բան մը կայ, մեր ժպիտն է ատ ալ: Ժպտուն Տէրիւշէթը՝ բո՛ւն Տէրիւշէթն է:

Ժէրսէյի ու Կէրնըսէյի անունը, մասնաւորապէս, հրապուրիչ հանգամանք մը ունի: Կինները, մանաւանդ աղջիկները օժտուած են գեղածաղիկ ու անբիծ աղուորութիւնով մը: Սաքսոնական ճերմկութիւնը՝ նորմանտական թարմութեան միացած է: Վարդայտեր ու ծաւի աչքեր:

Տէրիւշէթ Բարիգուհի չէր, Կէրնիսէյցի մըն ալ չէր: Սէն-Բիէր-Բորի մէջ ծնած էր: Բայց Մէս Լըթիէրի կրթեց զինքը: Սիրուն ընելու համար հոգ տարաւ: Ու սիրուն ալ էր: Տէրիւշէթ՝ անփոյթ ու խիզախ նայուածք մը ունէր: Սէր բառին իմաստը,

Թերեւս չէր գիտեր, ասոր համար մարդերը իրեն սիրահար կ'ընէր յօժարակամ, սակայն առաջնոց գէշ մտքի: Ամուսնութեան մը վերայ չէր մտածեր: Ծերունի աղնուականը՝ Մէս Լըթիէրին, որ Սէն-Սամբուրի մէջ հաստատուած էր, կ'ըսէր. Cette petite fait de la flirtation à poudre!

Տէրիւշէթ աշխարհիս էն պղտիկ ձեռքերը ունէր, ասանկ ալ ոտքեր, ճանճի չորս թաթիկներ, ինչպէս կ'ըսէր Մէս Լըթիէրի: Բարութիւնը ու քաղցրութիւնը անձնաւորած էր: Իբր ընտանիք ու հարստութիւն՝ հօգաբը, Մէս Լըթիէրին, իբր աշխատութիւն՝ քմածին կեանք մը, իբր տաղանդ՝ անուշ երգեր, իբր գիտութիւն՝ գեղեցիկութիւնը, իբր միտք՝ անմեղութիւնը, ու իբր սիրտ անգիտութիւնը ունէր ան: Գաղթածին շնորհալից ծուլութիւնը խառնած էր թիթեւութեան, ու մանուկի կծկման զբաղութեան մը, որ սակայն տխրութեան ալ հակամէտ էր:

Քիչուկ մը կղզեցիի յատուկ իր զարդարանքը՝ վայելուչ բայց անճիշդ էր: Ծաղիկներով գլխարկ կը կրէր բոլոր տարին: Ասի ունէր պարզ ճակատ, ձկուն ու հրապուրիչ պարանոց, չաղանակ մազեր, ճերմակ մորթ, ամուռան քանի մը չէկ բիծերով կէտկիտուն, պղտիկ ու սիրուն բերան, և աս բերնին վրայ ալ՝ պաշտելի ցուրբ իր ժպիտին: Ահա՛ Տէրիւշէթը:

Թարգմանեց
Մ. ԻՍԽԱԿՅԱՆ

Վ. ՀԻԻԿՕ

PROFESSEUR ANGEL

Վկայեալ Բարիզի եւ Պեռլինի
համալսարաններէն

Ամէն անոնք, որոնք կուզեն քիչ ժամանակուան մէջ, խիստ դիւրամատօքի պայմաններով հիմնովին սովորիլ Գերմաներէն լեզուն՝ ինչպէս նաեւ Ֆրանսերէնը

ԱՌԱՋԻՆ ԱՌԹԻՒ

պէտք է գիտեն Պանքե-գափու. Բալուգաի վաճառատունը, ուրկէ պիտի կրնան ստանալ հարկ կղած մանրամասնութիւնները դասախօսութեան առթիւ:

10—7

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

ՍԿԻԻՏԱՐԻ ՁԻՖԹԼԻԿԸ

Ձեռ գիտեր որ թուականէն ի վեր այս անունը կուտան այն աղուոր ծառաստանին, զոր Սկիւտարցի պարծանօք կը յիշէ երբ խօսքը կիրակիի ժամանցին վրայ դառնայ:

Պաղլար-պաշի կեդրոնը, շուրջանակի ցանկապատուած այդ գեղեցիկ պարտէզը, հակառակ իր ծերուկ տարիքին, միշտ վառ, միշտ ոգեւորուած, առ ինքն կը քաշէ տեղւոյն զբօսասէր ժողովուրդը Բագսը խնկարկելու: Եւ չի մոռնամ ըսելու որ Սկիւտարցւոց միակ և միմիակ զբօսավայրը եղող այդ պարտէզը իր դռները կը բանայ կիրակի իրեկունները մինակ. ասկէ կրնաք երեւակայիլ թէ՛ ամբողջ տարուան մը ծախքը — չըսեմ վաստակը — քսան կիրակիներէ կ'ակնկալէ տեղւոյն վարձակալը:

Սկիւտարցի կիները, որոնք հոգի կուտան Ձիֆթլիկ երթալու համար, չափազանցութիւն ըրած չեմ ըլլար երբ ըսեմ թէ՛ նոյն իսկ այդ պարտէզը երթալու համար կը շինեն իրենց ամառուան ֆիստանները և գըլխարկները: Սկիւտարցի կիներ երբ Ձիֆթլիկ կերթայ կը հագուի այնպէս, որուն նմանը կարծեմ չպիտի ընէր Բերացի տիկինը Բօքէն մը կամ Ժան Հատինկ մը լսելու համար թատրոն երթալուն:

Ձիֆթլիկ պիտի երթանք կըսեն, երբուսալէմ ուխտի երթալու պէս սրտոտ և հոգեթով շեշտով մը:

Սկիւտարցի մը երբ հիւր մը ունենայ, անոր օր ցուցնելու համար անպատճառ Ձիֆթլիկ մը կը տանի, այնպէս որ եթէ հիւրը մէկ քանի օր կենալէ վերջ չաբաթ օրով «Մնաք բարով»ը դընէ. — «Տէր ողորմեայ, տահա Ձիֆթլիկ մը չի տարինք. . .» ըսելով վար կը դնեն, և երբ երկուշաբթի մեկնելու ըլլայ, ետեւէն կըսեն առ հասարակ. . . «մեզայ ինչ պակաս ըրինք, Ձիֆթլիկ պիլէ տարինք», ըսել ուզելով թէ՛ էն մեծ իքուամը չի զլացանք իրեն. . . :

Եթէ չէք ձանձրանար նկարագրեմ ձեզի այդ նուիրական պարտէզին բուն միջուկը, այսինքն կիրակի երեկոյին ժամը տասն և

մէկէն մինչեւ գիշերուան երկուքի կեանքը իր մանրամասնութիւններով :

Անցեալ կիրակի քալառուներու սիրոյն շարաթ իրիկուընէ Սկիւտարցի բարեկամի մը մօտ սլքտրկացի , որպէս զի զիս հրաւիրէր յաջորդ օրուան նիւթ որոճալու համար : Եւ յաջողեցայ :

Ձի մոռնամ ըսել որ , որովհետեւ երթալիք տեղս Սկիւտար էր , բաց գոյն քօսթիւմ մը կունակս անցուցի , փոխանակ վրձին մը ճիւղս ի վար կախելու , և աղէկ եմ ըրեր կարծեմ :

Կիրակի իրիկուն ժամը տասնին ճամբայ ելանք ընկերովս հետ և ուղղուեցանք Պաղլար-պաշի , ուր կը գտնուի նաև Ձիթիկը : Ճամբան կը հանդիպէինք ընտանեկան խումբերու , որոնք չի քրտնելու և բուռնանին չի վազցնելու համար կրեայաքայլ կ'ուղղուէին դէպի հոն ուր մենք ալ կերթայինք վախելի :

Մինչ այս մինչ այն , վերջապէս հասանք : Պարտէզին դուռը իր գեղեցիկ անքոհով՝ այնպէս կարծել տուաւ թէ ներսը մանկապարտէզի հանդէս մը կը կատարուէր , և անանկ ալ պիտի կըլլէի առջի բերան , եթէ հովի պէս վազող կառնոսին մէկը չի պոռար անդիէն , « չիչէ Խիւղ , թագրմ իքի » :

Մէկ խօսքով պէտք է ըսեմ որ Սկիւտարի մէջ ոչ տուններ կ'իյն , և ոչ ալ անտուկները նոր լաթ մնացած էր , բոլորն ալ դուռս թափած էին այդ օրը : Երեւակայեցէք 4-5000 մէթր Եօն դետին մը ծառերով զարդարուած , որ ամբողջովին զբաւուած էր արու էգ բազմութեան մը : Գլխարկ , պլուզ , ճաֆ , ճաֆի բէշ , գունազեղ հովանոց , բուռնա , օ տը քօյօնեք , քրտինքի հոտ , ռաւէնկօթ , պօնժուռ , պօն նուի , և թէք թիւք ձերմակ բանթալօն , անա ամբողջութիւնը այն հայլայֆ (°) թուալէթին դոր կը կըրէր ժողովուրդը :

Պարտէզին մէջտեղը բարձրավանդակի մը մէջ կը գեղգեղէին արեւելեան ընտիր խումբ մը , որոնց հեշտալուր շարգիներէն հմայուած ընտանիքներ տակաւ կը թուլնային , կը քրքրուէին :

Առաւելութիւն մը որ աչքիս պոչէն չը վրիպեցաւ , այն էր՝ բուսմանտի և բայ խոնարհելու յատուկ ճամբան , որ օձողորտ զրկած էր պարտէզը : Ոմանք , մանաւանդ

երկսեռ երիտասարդները աջ ձախ կը պտտէին շուրջանակի , մինչ աղէկ գիտեմ որ իրենց էքօնօմիսդ հայրիկը ակռաները կը սեղմէր նստած տեղը , մտքէն անցնելով թէ « պէտք է քի խոնտուռանին մաշեցնեն . . . » : Ինչ կը հասկընան կոր աճապ պօստան տօլապիի պէկիրի պէս ֆըռըլ ֆըռըլ կը դառնան կոր նէ . . . » : Եւ իրաւունք ալ ունէր :

Ընկերովս հետ անկիւն մը կը քաշուինք , անանկ տեղ մը ուր կարենամ ամբողջ բազմութիւնը տեսնալ : Հագիւ հակափորնիս ամբողջ դպցուցած թէ չէ , հազարաւոր աչքեր վրանիս կը թափին , փափառք մըն է կըսկի մեր շուրջը , ամռան գեփիւռին պէս , ականջէ ականջ խօսուըռտուքը այն աստիճան կը կրկնուի , որ կստիպուիմ գրպանի հայելիս հանելով քննութեան մը անցընել դէմքս , արտառոց բան մը գտնելու սրտադողով :

— Կաղաչեմ բարեկամս , արդեօք իմ վրա՞ս կը փորտանէ այս տիկինները . . . կը հարցնեմ Սկիւտարցի բարեկամիս , որ նոյն պահուն մօտերնէս անցնող կառնոսին տիւղ քոպիսի կ'ապսպրէր :

— Կարծեմ թէ սիրելիս , անծանօթ դէմք մը տեսնելով կը հետաքրքրուին , ըսաւ բարեկամս սիկաւ մը հրամայեցնելով :

Երեկոյեան ստուերը տակաւ կը պատէր չորս դին , արեւը իր մնաս բարովը դրած էր , սանձարձակ տեղ տալու համար ալքօնին : Նուագածունները հիմա ալ աւելի ոգևորուած կոկորդնին կը պատռաէին մինչ ջութակի մի լարը « ինծի համար մի լար » ը կը թրթռայէր հեշտալուր :

Հակառակ քարեջուրի աշակերտ մը ըլլալու , Սկիւտարցիներուն ի պատիւ տիւղի վարպետ մը եղայ այդ իրիկունը , ու երբ օդային կազերը վառուեցան , տեսայ թէ տիկիններու գլխարկները որ մէկը ելած , որ մէկը ծռած վիճակի մէջ տեսնալու արժանի սան Ֆաւօնի մը մէջ կ'օրօրուէին :

— Շուախ . . .

— Վախս ինչ էր . . .

— Բարեսիրաց . . .

— Շատ լաւ . կը վճարեմ , ու կ'անցնին : Հագիւ թէ գաւաթիկը ձեռքս այն ինչ տիւղնով մէկէն ուտելու կերպը կը գիտեմ . . .

— Շուա'խ . . .
 — Նոր թաղի ջրհանկրաց . . .
 — Բէք էյի . . .
 — Աս օղին չատ աղուոր է , կարծեմ անարա . . .
 — Շուա'խ . . . Իճատիէի վարժարանին . . .
 — Հրամանեցէք , երեք տասնոց տուէք . . .
 — Ի'նչ կըսէի կոր , կարծեմ թէ անա . . .
 — Շուա'խ . . . Աղքատիկ ուսանողաց . . .
 — Լա'ւ , հրամանեցէք . . .
 — Խօսքերնիս ուր մնաց . . . հա' օղին անարա . . .
 — Շուա'խ . . . Սէլամսըղի ջրհանկրաց . . .
 — Կեցիր օղուում խօսքս լմացունեմ տէ կուտամ , ըսելով , կաւարտեմ նախադասութիւնս , ըսելու համար թէ « կարծեմ աս օղին անարատ է » և այս խօսքը հաւատացէք ճիշդ ու ճիշդ քսան վայրկեան կը տեւէ վաթսուոն փարայի փոխան :
 Հիմա մութը կոխած է ալ և գլուխները շողիացած . կառսօնը քրտինքները սրբելով քառթ վիզիթ մը կը վաղցունէ հետի բարեկամիս , դոր կարդալով կը խնդայ , և ինծի տալով կարդայ կըսէ քրքրներու մէջ :
 Տեսէք թէ ի'նչ զրուած է մէջը :
 « Միւսիւ Լեւոն ,
 « Բովի միսաֆիրդ էկէր օր քիմ ազատ խուշի է նէ պիշիմով մը մեր մասային քովէն անցուր , Եղսաբէթին բէք ու յղուն լօխմա կերեւայ կոր » :
 Պաւլօ' , տաք տաք դործ կիկուռն կերպը Սկիւտարցին մարդու չի հարցնէր եղեր :
 — Ի'նչ պատասխանեմ ըսաւ բարեկամս , երբ տեսաւ թէ կառսօնը կսպասէր մօտերնիս :
 — Բաւթղ տուր ես գրեմ պատասխանը ըսելով , մատիտով հետեւեալ սողերը գրեցի իրր յիշատակ իմ Սկիւտար աչցելելուս , և եղած արտաւոյց առաջարկին :
 « Ազնիւ բարեկամ ,
 « Մօտի բարեկամս թէ և ազատ խուշի , սակայն չուտուիր կարծեմ միտն ամէն խուշի . . . »
 Կառսօնը քառթը տանելուն , միտի տախտակներու պէս կանախները մեր կողմը դառացան , սակարկութիւնը չէր յարմարած :
 Մութը կոխած էր ալ , շատեր մեկնած էին , և միայն հոս հոն մէկ քանի ընտանիքներ լըրճուած մէզէները հատցընելու կը ըսէին , երբ մենք ալ ելանք :

Բարեկամս պակաս բան մը չընելու համար ստիպեց որպէս զի չի մեկնած քուռ մը ընենք պարտեզին շուրջը , ուր ճըլճը ճըլճը անցուղարձ կար :

Երանի թէ յարմարած չըլլայի իր գաղափարին :

Հաղիւ կէս ճամբան կտրած թէ չէ , մութին մէջ երկու սպիտակադգեստ օրիորդներ թե թեւի կանցնէին մօտերնուս , մինչ հակառակ կողմէն ալ երկու երիտասարդներ զաւաղանին ճօճելով անոնց ճամբուն չիտակէն կը յառաջանային :

— Սխ խուշիկս , ան կարմրուկ երեսներդ պերնիս մէջը ըլլայ . . .

— Վայ կլխօղ . . . տիպիդ բանթօլ մը առ տէ անանկ մայթապի ելիր . . .

Սկիւտարցիներուն վրայ կաղած գաղափարս , մտքէս , և խմած օղիս գլխէս թռաւ : Բայց չի զարմացայ , բնաւ , քանի որ վերոյիշեալ քառթ վիզիթին « քովինդ ազատ խուշի է նէ Եղսաբէթիս պերնին լօխման է » ն « երեսներդ պերնիս մէջը ըլլայ » էն առաջ լսած էի :

Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Պ Ա Ր Տ Ի Ձ Ա Կ

Վարժարանիս ի՛նչ տարեցանք կրօնի Սեպտեմբեր 6 ին (Ն. Տ.) : Հաստատութեան Տնօրէն Վեր. Ռ. Զեյնպըրս եւ իր Տիկինը արդէն վերադարձան եւ իրենց երկամեայ բացակայութենէն , եւ յառաջիկայ տարի ուսուցչական խումբին վրայ պիտի աւելնան Գանասայի մէկ նշանաւոր համալսարանէն երկու Ամերիկացի օրհանաւարներ , որոնց մէկը գլխաւորապէս պիտի աւանդէ առեւտրական դասընթացը :

Աւակերները ընտանեկան խնամք կը վաշխեն գիւետօրիկ ուսուցիչներուն , հաստատութեան մասնաւոր բժիշկին հսկողութեան եւ Տիկին Զեյնպըրսի մայրական հոգածութեան տակ :

Գիւետօրիկ աւակերներուն տարեթուական է 16 Օսմ. ոսկի , 8 ոսկին Սեպտեմբերի սկիզբը եւ մնացած 8 ոսկին Յունուարի վերջերը վճարելի :

Վարժարանս յասուկ ուսուցիչ մը ունի գործիական երաժշտութեան համար , այս դասին համար տարեկան մասնաւոր վճարումն է 1 1/2 ոսկի Օսմ.

Աւելի տեղեկութիւններու համար դիմել Մր-Բիքի Պայպր-Հաուս , Կ. Պոլիս , կամ Տնօրէնութեան Պարտիզակ :

ԿԻՆԵՐԸ ԶՈՒՐԵՐՈՒՆ ՄԷՋ

Երբ Կիները Զուրերուն մեջ վերնագիրը կը փակցնենք մեր շաբաթական յօդուածին դուռը՝ պէտք է դիտնալ որ շատ պարագաներ կան ուր անոնք Զուրերուն մէջ կը մնան, ինչպէս. ամառ օրով աղջիկտեսի եւ կող խնամիներուն դէմը երբ կ'անցնին, « աճապա հաւնեցաւ մի՛ չէ մի » ըսելով Զուրերուն մէջ կը մնան : Երկրորդ, նոյնպէս ներկայ ամիսներուն գլխարկ կապել տալու համար Ռերա ելած ատեննին խանութէ խանութ ջեքլիքի պէս մտնալով ելլալով Զուրերուն մէջ կը մնան : Երրորդ, կառապանին հինգ դրուշ պակաս տալու համար զբօսավայրի մը զառաւելերին ստորոտը կ'իջնան եւ քալելով կը մագլցին ահագին ճամբան ու Զուրերուն մէջ կը մնան : Զորրորդ, հագուած չքուած քօսսէին տակ սեղմ վիզիթայի կ'երթան ու ժամերով կը դակնին չի կենար, ու հակառակ հոտով թաշկինակը մտավաճառի աշկերտի պէս շարժելուն՝ Զուրերուն մէջ կը մնան. եւ դեռ շատ մը նմանօրինակ պարագաներու ալ նոյնպէս, բայց մեր այս անգամ ընտրած նիւթը բոլորովին տարբեր է :

Կիները Զուրերուն մէջ երբ կ'ըսենք, կիները ծովաբաղնիքին մէջ ըսել կուղենք : Ահա ձեզի ծաղիկ ի քթին նիւթ մը օրը օրին à propos !

Ծովու լողանքը չեմ դիտեր ո՛ր թուականէն ի վեր ընդունուած է բժշկական աշխարհէն, այնպէս որ Յուլիս, Օգոստոս ամիսներուն՝ դեղագործներէն աւելի՝ բաղնիքաններն են որ կը շահին. բժիշկներուն ըսելիք չկայ՝ քանի որ անոնք տարին տասներկու ամիս ապահոված են իրենց վաստակը :

Գաղափար մը տալու համար կանանց ծովու բաղնիքին վրայօք, քիչ մը վարը նկարագրութիւնը պիտի ընեմ ձեզի այդ թապլօյին՝ որ կարծեմ նոյնը պիտի ըլլայ, բնականին յարեւմանը, հակառակ աչքով չտեսնալու եւ ականջով չլսելու, սակայն եւ այնպէս ընթերցող քոյրերս պիտի կրնան

անկեղծաբար հաստատել գրուածքին ճշդութիւնը :

Ծովու բաղնիքները ընդհանրապէս ծովեղերքները կառուցուած կ'ըլլան (ահա ձեզի կարեւոր դիտելիք մը, չգիտցողը թող օգտուի) : Հոս փոխանակ Գատրգիւղի, Հայտար փաշայի, Վոսիորի ծովաբաղնիքներուն վրայ խօսելու, պիտի նկարագրենք չոգեկառք անցած ծովեղերքներուն բաղնիքները՝ որպէս զի քիչ մը զովանանք այս տաք օրերուն :

* * *

Ժամը երեկոյեան տասն է : Դպրոցականներու արձակուրդին պէս կարգ կարգ տիկիներ, օրիորդներ եւ մինչեւ տասը տարեկան տղաք՝ մէկմէկ ծրար ի ձեռին՝ պարզ (որ թարգմանի թափթփած թուալէթով) ծովեղերք կը դիմեն : Որ մէկը նիհար՝ չուպուխի պէս, ոմանք կռնած, որ մէկը խառնիւծի, ուրիշներ չիպանածածկ դէմքով, վերջապէս բազմութիւն մը որ քիչ մը մեր Հիւանդանոցի կանանց բաժինը կը յիշեցնէ դիտողին, կուղղուին դէպ ի բաղնիք, որուն դրանը մօտ ձկնորսի մայր մը սե խաբաթմայով նստած տոմսակ կը ծախէ, երկու մասներուն մէջ միացնելով երեսուննոց սիկառը :

— Զուրը պա՞ղ է՝ թո՞ւիտայ տուտու, կը հարցնէ տիկին մը, նոյն իրիկունը վերջսիյէ մտնալուն նախաբանը անուշճա հասկըցնել ուղեւով :

— Հիմաճուկ մտնաս նէ տաքութիւնդ ճուրին կը զարնէ՝ կ'ըլլանայ հոգիս, կը պատասխանէ ջատուկը, դերեղմանաքարերու պէս հոս հոն ցցուած ակռաները ցոյց տալով թիթեւ ժպիտով մը :

— Ընէ . . . տաքութիւնս է մնացեր քի. ինծի կը սիրես տէ անանկ ըսելդ կուգայ կոր : Ինծի նայէ թո՞ւիտայ տուտու, չորս հոգի պիտի մտնանք ամա մանրուք չի կայ վաղը իրիկուն երկուքը մէկ կուտանք, չըլլար . . . :

Թողտալ տուտուին գէմքը ամառուան կերակուրի պէս կը թթուի :

— Աղէկ ամա ես վրուս , իրիկուան հիսապ կուգեն ինէ , ի՞նչ ճուղապ տամ . . .

— Մեղայ , սատէքեար Աստիկին թախմը եկան ըսես նէ ագան սուլար տուրուր , պօշ լախըտը , անցէք քա Մարիէնէ :

Ու բոլորը մէկ ներս կը մտնեն ուր բաղմութիւնը արդէն խոնուած էր :

— Ը՛նհ . . . քէլ Բիբիկին հարսն ալ ծով կը խոթեն կոր , կէօյամ քի միս բռնէ տէյի ամա փչեն նէ պիլէ ֆայտա չունի , խաղմա քիւրէք եաղի քսէին պարէ . . .

— Քա տուտու կամաց ըսէ , պէլքի գիտածու մը կ'իմանայ . . .

— Ինչո՞ւ , ինչո՞ւ համար պերանս խծպեմ , անոնք չէին քի կիւլիւկիս համար տիւզ տապանէ տէյի անոր ասոր չալ էին ըրեր . . . սո՛ւս պերանս պանալ մի տար , հայտէ տա լօճան մտէք տէ հանուեցէք , դուք չըմանիդ ըրէք տէ ես սողրամտան կը մտնամ . ըսելով իր աղջիկները խցիկը կ'առաջնորդէ ու ինք դուրսը ծանօթ կնոջ մը քով կ'անցնի կը նստի , մինչ մէջտեղը՝ ծովին մէջ քսանէ աւելի եւայի թռուներ , բուֆ բուֆ ընելով չբըլ չբըլ կը տատանէին :

— Բարի իրիկուն կայ վրադ Նունիայ քուրուկ . . . վայ . . . սանկ նստիմ տէ չօճուխները չըմանին ընեն . . .

— Էյ երկու աշկդ խաղայ կիւլիանէ , դո՛ւն ես եղեր . . . նստէ նայիմ , աս քանինճի պանեօն է . . .

— Ութն անգամ մը եղաւ , տահա տասններկու հատ ունինք , հէքիմին թէրթիպովը :

— Ես ալ հարսիս խաթերն համար կուգամ կոր . տղաս իլլէ ետեւէն է ինկեր քի չիշմանայ տէյի , ալ նէ օղղըր էթիի էօղը մնաց , նէ հավա թէպտիլի , նէ խնախնայի խիւլասա , մէկ տիպէն փչելը մնաց . . . հիմա ալ ծով , կայնէ նայինք . . .

— Հա՛ ամա , գիտնալս չիշմանութիւնը ճընս է , նա՛ քէլ Բիբիկին հարսն ալ պերեր ծով կը խոթեն կոր ամա , նէ միւմքիւն ի՛նչ ճգլած է նէ ան է :

— Քա մարիկ հիմաճուկուան աղջիկներուն խելքս չհամիր կոր , կոկէթ երեւանք տէյի անտար վուճուտնին մէկէնէն կը դնեն

կոր քի , ետքէն վրայ կալ կ'ուգեն կոր ալ նէ միւմքիւն չըլար կոր . . .

— Քա ան չէ ամա , տա ջուրին մէջի մալի վարտիքին ո՞վ է , նոր միւշտէրի է գիտես քի , հէ՛ . . .

— Կեցիր կէօղլիւկս դնեմ նայիմ , ո՞րը :

— Սա տիբէկին տիպը կայնեք շան պէս կը լողայ կոր նէ . . .

— Հա քա աղէկ ըսիր , անոր հիքայէն կայ . . . Ասիկա մէխանէճի Ծօռտանին աղջիկն է . . .

— Մէխանէճի Ծօռդանը ո՞վ է . . .

— Ծօռտան Ծօռտան . . . սա ուր է ժամուն քէօշէն ըսպառչա ֆըլլիլի խանութ մը կայ նէ . . . իշտէ ասոր աղբարը աղջիկ մը կը սիրէ կոր քի , ատ աղջկանը աղբարն ալ ասոր հետ է :

— Էյ . . .

— Ասոնք ամէն իրիկուն թեւ թեւի չըմէնտըրէֆին ճամբան սօլաչօ ըսելնիքէն , նասըլ կ'ըլլայ մէկալ գիշեր հարերնին ըռաստ կուգայ , ասոնք առջին կը ձգէ , կ'առնէ տուն կուգայ , ատ օրէն ասօր , աղջըկանը վրան դուրս կուտայ վախէն , իշթէ հէքիմն ալ ծով թէրթիպ է ըրեր , ամէն առտու իրիկուն մարը կ'առնէ կուգայ կոր :

— Էյ հայտէ , օ՛խ ըլլայ , բօստալ շուներ , վաթկեր են գիտես քի , օ՛խ ըլլայ , քա ա՛ն է քի խալիի պէս վրան դուրս է տուեր . . .

— Եա՛ . . . ինչե՛ր , ինչե՛ր . . . մահալլէին մէջը խախք եղան տէ՛ խանտիւնաֆթիին աղջիկտեսն ալ ետ եղաւ ասոր երեսէն . . .

— Քա պարէ աղուո՞րս ըլլայ . չոր բաթլիճան է դարձեր . . .

Նոյն պահուն իր աղջիկները պլըխ պլըխ (?) խցիկեն դուրս ելլալով մէկիկ մէկիկ ջուրը կը ցատքեն :

— Խէրերնին տեսնաս քուրուկ , Աստուած բարի խամէթ տայ . . .

— Ը՛նհ . . . հիմաճուկուան տէլիխանընները քէօռ են զաթը . Աստուծոյ համար իմիններս են տէյի չեմ ըսեր ամա , պալըխ էթի , կիւմուս մաղ , աչք իքլի , ճերմակ , նա իշտէ վուճուտնին օռթան է , նայէ վըրանին լէքէ մը կայ . . . ամա տահա մէկը տուտու չախչախը ծառքը չառաւ . . .

— Ատէթ ըլլար տէ, տէլիսանըները ա-
սանկ ծովի պաղնիքները գային տէ հոս
աղջիկ տեսնային, ան տուններուն մէջը տե-
սած աղջիկներն բիւթիւն ուսուրմասիօն
հագուած գուգլաներ են քի՛ պսակին գի-
շերը ֆոյանին մէյտան կ'ելլայ, ամա հոս
գալու տեսնալու ըլլան նէ աչքովն տիպը
վրան կը տեսնային տէ՛ ետքի լախըսը չէր
մնար :

— Իրաւ ես քուրուկ, ամէն բանին ա-
լաֆրանկան կտան, աս ըսածիդ ալաֆռան-
կան չըրին տահա . . .

* *

Ուրիշ պատկեր մը :

— Ինծի նայէ Սօֆիկ, երկինքները ել-
լաւ նէ պօշ է, էրիկդ քննէ պաղեր է վէս-
սէլամ . . .

— Կեցիր նայինք, աս իլաճն ալ ընեմ
տէ նայիմ ինչ մահանայ պիտի գտնայ շան
ձգնածը . . .

— Էյ հիմա ինչ կ'ընէ կոր քի . . .

— Զայիֆ եմ աչի վիրա երեսիս կուտայ
կոր . . . ես ալ ելայ տօքթօռն կացի հաս-
կցուցի . մարդը ըսաւ քի ծով մտիւր տէյի,
հաթթա իրեն ալ ըսած չունիմ, պաղնիքիս
հախը սըրչա մատնիս իլէն ելուէք մէտալ-
եօնս սարաֆին տարեր տէ բարայ եմ վեր-
ցուցեր . . .

— Վախ կէօղիւմ վախ, ամա հիշ խելքս
չպառկիր կոր քի էրիկմարդդ իմլայի կու-
գայ տէյի . . .

— Կեցիր նայիմ, զայիֆուլինս մահա-
նա չընէր կոր մի, մանտաներու պէս փըչ-
ուիմ տէ, նայինք ինչ իճատ պիտի հանէ
սօղրամտան . . .

— Էյ պարէ ֆայտա մը կը տեսնա՞ս կոր :

— Հապա, նա սա սապօնլուխներս չի-
գան, առաջ մէյմէկ խնծոր սղմելու խտար
չուխուր էին, հիմա նայէ . . .

— Նայիմ . . . հա՛, ամա տահա կ'ուզէ
գիտես քի . . .

* *

Քիչ մը անդին երկու հասուն օրիորդներ,
որոնց մագերուն մէջ ալիւր մաղուած է
գոգեհա, երկուքն ալ մերկ իրենց պուռ-
նուզներուն մէջ պարտկուած, քապլօ վիվանի

պէս կեցած են անկիւն մը աւազանին մօտ,
սպասելով իրենց կարգին, որպէս զի ճիւմբ
. . . մխրճուին ջուրերուն մէջ :

— Արաքսի, հոգիս, չի մսիս, դուն կու-
ղես նէ ցատկէ . . .

— Զէ խուշս չեմ մսիր կոր ամա, ա-
սանկ կենալս ալ շատ ախորժելի չի գար կոր
ինծի . . .

— Սիրելիս, աս տարի կարծես ամէնքն
ալ խօսք մէկ են ըրեր ծով մտնալու համար,
անցեալ տարի ինչ աղէկ էր, հաղիւ տասը
հոգի կըլլար բաղնիքը . . .

— Անուշիկս, չե՞ս գիտեր որ հիմակ-
ուան նորոյթը միս կապելն է . . . խօսքը
մէջերնիս, մեր վրայ մտածենք քիչ մը, ես
ալ դուն ալ երկուքնիս ալ այդ գաղափա-
րով չէ՛ մի որ կուգանք կոր . . .

— Ատ ալ չիտակ է քոյրս, հայտէ մենք
ամուսնացու աղջիկներ ենք, քիչ մը մոտ
երեւնալու համար պանեօ կընենք կոր, հա-
պա սա գաւազներու տէր տիկինները . . .
անոնք ինչո՞ւ կաշխատին կոր գիրնալու հա-
մար . . .

— Հոգիս, գիտնալու ես որ մենք դեռ
մէկը չունինք, որուն քմահաճոյքին համա-
կերպինք, մինչդեռ անոնք՝ իրենց գլխուն
վրայ մէկ մէկ ամուսին ունին, որոնց կամ-
քին ծառայելու պարտաւոր են : Եւ որով-
հետեւ միտք թէ ուտելու և թէ տեսնելու
համար հաճոյալի բան մըն է, ուստի անոնք
ալ ստիպուած են ինքզինքնին գիրցնելու,
որպէս զի ամուսիննին հաշտ աչքով նայի
իրենց . . .

— Պաալօ՛ հոգիս, եկուր մէյ մը պագ-
նեմ, հաւատայ որ փաստաբան ըլլալու ար-
ժանի ես . . .

— Նայէ նայէ, Արուսեակը նայէ, հար-
կաւ կը ճանչնաս, նիհար ըլլալուն համար
որչափ երիտասարդներ տեսան և չի հաւնե-
ցան : հիմա բօխկները ծով որոշեցին, մայ-
րն ալ խեղճը առտու իրնկուն կը բերէ
կոր . . .

— Ըսել է մենք հիմա փչուինք պիտի . . .

— Հապա՛ . . . պիտի տեսնաս որ ձմեռ-
ուան մօտ երկուքս ալ նշանուած պիտի ըլ-
լանք, չնորհիւ կապած միսերնուս . . .

— Հայտէ խուշս, ես կը ցատկեմ կոր,
չատերը ելան, մէջտեղը պարապ է . . .

— Ես ալ . . . :

Ու ճլո՛մք ճլո՛մք իրարու կտուէ կը ցատկեն ամուսնացու խուշիկները :

* * *

Ուրիշ ընտանիքի մը խօսուընտուըն :

— Վայ մեղքիս , աստարն ալ չէի տեսեր . . .

— Քա ինչ կըլլաս կոր . . . զաւակս է , սիրողս չե՛մ առեր տէ պերէ՛ր ես . . .

— Աս իրիկուն զաւակդ պերիբոնէ վաղըն ալ էրիկդ պեր , թամամ ըլլայ . . . հի՛չ էօմբիւս մէջը խօս խօճաման տղան կընկան պանեօ պերեկին չէի տեսեր . . .

— Ը՛նչ . . . անըման տուտո՛ւս . . . աս տար նամուսըն ես , հա՛ . . .

— Քա տըւոր պօյը նայէ , աս օր աղջիկտես երթայ նէ պան մը կը պէճէրուի . . . պըրեկները պիլէ դեպէնմիշ է եղեր . . .

— Անիկայ տարիքէն չէ , ճը՛նս է ճընս , ողորմած հոգի քուրս ալ ունէր , աղջիկ հալոք . . . ասիկայ մանչ է , հէ՛մ ալ խըվըուճըն , պօյը սիրեմ . . .

— Քա վայ խելքիդ , ինծի համար չեմ ըսեր կոր . . . աղջիկներս հետ են , ամօթ է . . .

— Չըլպախ չեմ խօթեր կո՛ր ես , փէշտիմալ ունի . . . , եկուր ծօ Գէորդիկ կըրիդ անուշ ճուր մը թափում տէ հագուիս . . .

— Ո՛ւֆ . . . մայրիկ Ծիւռիկին հետ ծովին մէջը տալդա կը հանենք կոր . . .

— Հա ես . . . տեսար մի հիմա չօճոխ ըսածդ , նայէ ինտոր պերնին համը կիտէ կո՛ր . . . ես . . . տալդա պիտի հանէ հէրիֆը . . .

— Չօճոխ է , հէլպէթ էյլէնմիշ ըլլալ կուզէ . . .

— Աղէկ ամա , ամէնուն էքսիկ էթէկը քու մանչուդ էյլէնճէն չեն , խապահաթը համամճի կընկանն է քի ներս կառնէ կոր . . .

— Տուտո՛ւ տուտո՛ւ , կըսէ տղան մօրը քովը վաղելով , Թագուհիցայինց աղջիկը սիրտին վրայ խօսխօճաման ուռեր ունի . . .

— Հիւանդ է տղաս , դուն եկուր , ինչուդ պէտք . . .

— Տեսա՛ր քա , մարիֆէթդ տեսար , նայէ աչքը ուրտեղուանքը տնկեր է , տահա կայնէ տէ չօճոխ է ըսէ , ան հիմա դուրս ելլայ

աչքերին չալ պիտի ընէ քի , Թագուհիցային աղջկանը ուռերը տեսայ տէյի . . . , կիւնահ չէ՛ աղջկանը . . .

— Նալլէթ սուռաթնուդ , բիւլման եղայ , հաղար բիւլման պաշլայիլուս , սըտեղը հինդ օր տահա մտնամ տէ , ֆէրահաթ . կամ պիտի . . .

— Վաղը իրիկուն ալ աս սըտըխը հետդ պերես նէ հիչ մէկերնիս ալ չպիտի մտնանք ըսեմ տէ . . .

— Անոր հարը կը ճաշնա՛ս հրամանքդ . . . հէ՛ . . .

— Ո՛ւ ըլլայ նէ ըլլայ , ըսէգիլութին է վէսսէլամ . . .

— Ես էրիկս պերեմ տայնա տայնա տուռը կեցունեմ տէ ներս մտնամ , տուն ալ ինծի դուրս հանէ պօյըդ տեսնամ . . .

— Էրկինաս տէ խղը տէօշէկդ ըլլայ հէմէն , սըյրբիս սիմարա . . . քեզի հետ սատանաները թող պօյ ելլան . . . պաշլաս պաղնիք չիգայ չէ ես . . .

— Երկու լուսերնիդ քէօճնայ քի ամէն ճէնապէթութիւնը ետիւրի պէս վրանիդ փակցուցած էք տէ , կէօյամ խըյախ նամուսընի պէս՝ տասը տարու չօճոխիս մահանայ կը դնէք կոր . . . հրամանքդ աղջիկներդ աղէս պահելուդ , չըպըլըլըլտախ տառացաներէն վար կտխուելնին տիխաթ ըրէ քի , տեսող աչքերը , իմ ետիւրուիս պէս չէ , մէջերը էօրիւմճէկ կապած բալապըյըններու աչքեր են . . .

— Երկու լուսը քէօճնա սէպէպ ըլլողին քի ծով թէրթիպ ըրաւ . սա նայէ արունեսրըս բիւթին խաֆաս կելլան կոր . . . քա դուն ո՛րին աղջիկները պերնիդ սախըզ կընես կոր նայիմ . . . հէ՛ . . .

— Տէ հեռուէն խորաթէ , կիտցած կընիկներէդ չեմ . . .

— Էրկանդդ կոնակի մոռերը խալաթ , կիտում ինչ չիէկ ըլլալդ . . .

— Քուկինդ քէօթըլում է տէյի իմինիս աչք տնկես պիտի հա՛ . . .

Ու դեռ պիտի շարունակէին կոիւր , երբ Գէորդիկ կուգայ իմացնել թէ՛ քրոջը ընդակները լօճային մէջէն դողցեր են . . .

Կանանց բաղնիքը , ըլլայ տաք ըլլայ պալ , իր օգուտէն աւելի վնաս ունի , սա բաղնիք ճակ ճշմարտութեան համար թէ , կանայք արքայութիւն ալ դտնուին իրար կը կռեն : Երանի միւր նախամօր Եւային որ առանց սուռակցի մը ընկերակցութեան վայելեց կեանքը :

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՁԱԽԱԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ

Սիրելի ընթերցող, որպէս զի կարենաս որոշ դաշտավար մը կազմել զլուսդ ցանկնու տրամադիր եղող նուաստիս վրայ, քեզի ձախաւերութիւններէս մէկ քանին պատմեմ :

Հակառակ գլխուս ձեւին, զիտութեան մեծ փափաք ունի դպրոցին մէջ, այնպէս որ ամէնէն արած զասերէս մէկն էր երկրաչափութիւնը : Ամէն քննութեան միայն այդ դասին կ'աշխատէի կարգս փոխելու յոյսս անոր վրայ դնելով, որովհետեւ ճշմարտը ըսելով՝ միւսներուն մէջ թիւերուն բացակայն կ'արժէի :

Ամալիրջի քննութեան, ուրկէ ետք ալ «բարի եկար» պիտի ըսէին ինձ դպրոցէն, շատ աշխատեցայ : Գրեթէ զոց ըրի երկրաչափական բոլոր տեսութիւնները, այն աստիճան որ բոլոր ընկերներս ալ իրենց յոյսը վրաս դրեր էին : Քննութեան օրը հսկողը յօնքերը կամար չինած և ճակատը հեռադրաթելերու կայանի վերածած՝ զիս սրահին մեկուսի մէկ կողմ խրկեց, հանգիստ լուծելու համար :

Բաղդէս ալ դժուարին խնդիր մը տրուեց ինձ աղաները, որոնք կ'երգնուէին իրենց գունտ գլխուն վրայ, բան մը չէին հասկընար իրենք :

Այնքան զբաղեր եմ արուած խնդիրը լուծելու, որ ոչ միայն խնդիրը այլ և առջի օրուան կերածներս ալ լուծեմ եմ կատարելապէս, այնպէս որ հաղիւ ժամանակ ունեցայ, զրա՞ծ թուղթերս ստորագրելու և դուրս ելլալու :

Սրահ վերադարձաւուս, հպարտ ակնարկ մը պտըտցուցի ընկերներուս վրայ, որոնք թուղթի վրայ քրտինք և խնդիրը առաջարկողներուն գլխուն ալ մաղթանք տեղացնելով զբաղած էին :

Կարծես սատանան զիս դրդեց, անգամ մը աչք պտտցնելու զրա՞ծիս վրայ, բայց ի դուր կը փնտռեմ գրածս, մէջտեղ չիկայ : Կը հարցնեմ, «չտեսանք» կը պատասխանեն : Խենթեանալ բան մը չէր : «Մտածէ անգամ մը, ո՞ր դրիւր» ըսաւ հսկողը, և ես, կամայ հաւատացէք, կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով մտածեցի կէս ժամ . . . Բաւաղամի էշուն պէս :

Ահ չար սատանայ, սեւ բաղդ, եթէ դուք ըլլայիք իմ տեղս չէի՞ք բարկանար, չէի՞ք անիծեր կերածնիդ ալ խմածնիդ ալ :

Խեղճ տքնութեանցս արդիւնքը եղող քննութեան թուղթը սխալմամբ հետս տարեր եմ դուրս և պատուեր եմ . . .

Բայց մի զարմանաք, աղաները վրաս զթնացին և առանց նայելու գլխուս դատարկութեան, հասակիս չափ երկայն վկայական մըն ալ ինծի տուին : (Չգիտեմ ի՞նչ ընելու համար) :

Ալ հաստատ միտքս դրի, մէյ մըն ալ ստանի ապուշութիւն չգործել, և ահա ճիշդ անցեալ օր՝ նոյն ցաւը նորէն զիս բռնելով, քիչ մնաց որ ժամացոյցս (25 դրուշ, արեւի նէ կը տանիք և նոր մը կ'առնէք, կը ծախուի մեծ նպարավաճառներու քով) կոտորուէի : Տեսէք թէ ինչպէս. սիրտս հաւկիթ մը ուտել ուղեց (հիմա պիտի ըսէք որ մարդ ուրիշ բան չգտար ալ ինքզինքդ ուտելու ելար), ուստի ջուր տաքցուցի և որպէս զի հաւկիթս ալա քօք ըլլայ, որոշեցի ժամացոյցով խաշել, բայց ապուշութենէս ջուրին մէջ փոխանակ հաւկիթը մխրճելու . . . Ժամացոյցը մխրճեմ եմ, հաւկիթին վրայ ալ ուշի ուշով ? ? նայելով . քառորդ մը ետք անդրադարձայ եղածին և զղջացի բայց ի՞նչ օգուտ, վսթսուն փարայէ ելեր էի ապակին ճաթեցնելով : Օր մը մայրս հիւանդ ըլլալով, հաւկիթ մը խաշել խնդրեց ինձմէ : Բայց որպէս զի այս անգամ ալ ժամացոյցս բան մը չընեմ, մայրիկս ըսաւ որ «Հայր մեր» մը ըսելէս ետք հաւկիթը իրեն բերեմ :

Նուաստս, խելացի Դաւիթ մը, կարծեցի թէ «Հայր մեր»ն է որ հաւկիթը պիտի խաշէ : (Չմոռնամ ըսել որ, դպրոցէն վկայականով շատոնց մեկնած ըլլալով բոլոր գիտցածներս ալ մոռցած էի դժբաղդաբար) : Ուստի փոխանակ «Հայր մեր»ի, քովս գրտնուած աղօթագիրքը բացի և . . . «Հաւատով խոստովանիմ»ը կարդացի : Աւելորդ է ըսել թէ հաւկիթը ուղածէս ալ աւելի խաշած էր : Ալ չեմ ուղեր ձախաւերութիւններուս բոլորն ալ պատմել հոս, քանի որ այս օրերս ջերմաչափը շուքին մէջ . . . 38 աստիճան ցոյց կուգայ :

ԳԻՆՈՎՈՐԹԵՐՆ

Երազներու մեջ միտք բախում ,
Պատահներու անբախում ,
Կ'անցրենեմ ես ժամերս անհուն ,
Գեղեցիկը երազելով :

Կը մեղանչեմ , գիտեմ , հոգիս ,
Գոռ կիբերս գրգիռներով ,
Կը կուսակուրի ձուլուած մեղքին ,
Հառաչանքն ալ մեր սրտին հով :

Ես կը սիրեմ երազել եւ . . .
— Անհոգ , անփոյթ մեղանչանքս , —
Հուրին մազով ազաւաստեւ ,
Ու գրգռուիլ կարօտակեղ :

Իմ քղանկներս կարօտակեղ ,
Յորդ յոյգերս , անգուսպ , մոյի ,
Յուզումներս բուռն , կը մարին
Շիրերովը լոկ ալիւի :

Եւ անզգայ կը մոռնամ զայն ,
Կը դողդղամ , լուռ ու անձայն
Գինովութեամբ յար դալկահար ,
Անոր երբեք չեմ մօտենար :

ՍՈՒՐԱՏ ՍԱՐԱՅԵԱՆ

ՃԵՐՄԱԿՆԵՐԸ

Ամբողջ ներմակ Երզագետիդ մեջ այն օր ,
Գոգցես հրեօտակ մ'երեւցար դուն ինձի .
Հրեօտակ մ'անբիծ՝ որ վարանի հեօօրօր՝
Երգել սրբոց մեղեդիներն կանացի :

Բայց դուն աղւռ՝ մի վարանի երգելու ,
Սիրոյ երգերն՝ զոր մուսաներն են ձօներ .
Սիրողները թող պատմեն քեզ սիրելու
Հեօօօրօրներն՝ որ կզգայսիւս մ'անձնուեր :

Երբոր սուրբիս այդ երգերը սիրային ,
Եկո՛ւր որ քեզ բացատրեմ ես այն օրուան՝
Ճերմակներուն նուրբ խորհուրդը երկնային ,
Խորհուրդ մը մեծ՝ զոր վեհ սրտերն կը կարգան :

Ու այն ասեմ հոգիդ՝ սիրոյ կուսական ,
Պիտի լեցուի վեհուրբիւնովն անհունին :
Մարդուն կեանքին մեջ վայելի պահեր կան ,
Վայելներ՝ որ սակայն ցաւ ցուս կը սահին :

ՍՏԵՓԱՆ ԽԱՉԱՌԵՆԻ

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱՐԱԶԱՐ

Այս վարժարանը , զոր կ'վարեն ինն ան-
դամներէ բաղկացած Խնամակալութիւն մը ,
Եւ բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ
կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ
մը , հիմնական դաստիարակութիւն մը կու-
տայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն :
Կ'աւանդուին բնական , իմաստասիրական ,
չափական եւ այլ գիտութիւններ : Մասնաւոր
ոյժ կ'սրուի հայերէն եւ անգլ. լեզուներուն .
Կ'ուսուցուին նաեւ թուրքերէն եւ Ֆրանսե-
րէն լեզուները : Վարժարանին երկու բնար-
ձակ եւ օդաւեժ ցեմէրը , ինչպէս նաեւ
Խնամակալութեան երկու բժիշկ անդամներ
մեծապէս կ'ապահովեն առակերտահիներուն
առողջութիւնը : Անաստուի Երկարուղին ,
որուն մէկ մասնագիծը մինչեւ ֆաղաֆա կ'եր-
կարի , ճամբորդութիւնը խիստ դիւրին եւ
հաճելի կ'ընծայէ : Գիշերօթիկներու տար-
օրուան է 12 օսմ. ոսկի , զոր երկու մաս-
նովնարով պէտք է հաշուցանել : Դաւանակի
դասի համար 5 կամ 3 ոսկի կ'ապահանջուի ,
դասառութեան քիւրն համեմատ : Երգեհոնի
դասի համար 2 1/2 ոսկի կ'ապահանջուի : Վար-
ժարանին ԻԱ. տարեօրացանը կ'սկսի Սեպտ. 13
(Ն.Տ.) , Դե. իրիկունը : Վարժարանին նոր
յայտագիրն ուղղութիւնն ձգի կ'ընկուի :

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր.
Բիթի , Պայպըլ Հաուս , Կ. Պոլիս , կամ գր-
ել Տոհգ. Ս. Էֆ. Գալաթեանի , Ասեմապետ
Խնամակալութեան , Ասաբազար : 8—1

ՍԱՆԹԻՄ ՄԻ ՏԱՄԲ

ԱՌԱՆՑ ԱՆԳԱՄ ՄԸ ԱՅՅԵԼԵԼՈՒ

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՍ ՇՈՒԿԱՅ, ԳՈՂՈՒՄԸՆԴԱՐ ՓՈՂՈՅ ԹԻՒ 13

Ուր պիտի գտնէք ամէն տեսակ հազուատի,
ներմակեղիներ, ֆանթեզի, աղամանդի, ժա-
մացոյցներու , շրջայններու և ամէն տեսակ
կարասիներու ճոխ մթերք մը :

ԵՒ ԳԻՏԵՔ ԻՆՉ ՊԱՅՄԱՆԱԻ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Գնած ապրանքներու % 20 ը կանխիկ ,
մնացեալը շաբաթական % 5 զրէ վճարելով :
Կանխիկ գնողին % 5 զեղչ :

Հէրճայի վաճառատունը կը փութայ ծա-
նուցանել իր բազմաթիւ յաճախորդներուն
թէ՝ մօտ ատենէն պիտի աւելցնէ տեսակը իր
ապրանքներուն , զորս պիտի հրատարակենք
յաջորդելու :

[4]

ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒԻ ԺԱՔՕԼԻՈ

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՁ

ՓԻՂԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԲԱՐԲԵՐԸ

Քանի որ խօսքը փիղերու վրայ է, քիչ մը ծանրանանք անոնց բնութեան և բարքերուն վրայ:

Անասուններուն ճշմարիտ պետք փիղն է և ոչ թէ առիւծը, և ասիկա ցոյց տալու համար գիտական յեղաշրջութիւններ կատարելու հարկ չկայ: Պիւֆօն կ'ըսէ. — «Եթէ մենք ինքզինքնիս հաշուի դնել չուզենք, փիղը ստեղծագործութեան ամէնէն նշանակելի արարածն է»: Իրաւ ալ ոչ մէկ կենդանի էակ, նոյն իսկ մարդը իր ճարտարարուեստական բոլոր միջոցներով, չեն կրնար փիղին յաղթահարել: Մ'չ մէկ խոչընդոտ կրնայ անոր դիմանալ, ոչ վանդակ և ոչ ալ բանտ կարելի է դնել զայն, եթէ ինք չհաւանի:

Փիղը կը սպաննուի պատերազմական գործիքներով, փոսի մը մէջ գլտորելով կամ թունաւոր նետերով՝ դարաններ լարելով: Բայց զայն կարելի չէ հնազանդեցնել առանց իր կամքին, ան չընտելանար ուրիշ անասուններու պէս սովորութեամբ կամ զրկանքներու ուժով, այլ պէտք է զայն քաղաքակրթել իմացականութեամբ, արդարութեամբ:

Քաղանք, որուն տէր կ'ըլլան մարդիկ, վերադարձներ ունի դէպի վայրի կեանք: Պէտք է զայն պահել երկաթէ վանդակներով սահմանագծուած վայր մը: Յետոյ, օր մը, վանդակորմին կանթեղներուն լոյսերուն տակ փայլակ մը կանցնի իր աչքերէն, հրաչէկ կը տեսնէ ամէն բան, և փոխանակ գաղանաղուսպին երկարած չըջանակին մէջէն անցնելու, անոր վրայէն կը ցատքէ և ծուրկ ծուրկ կ'ընէ զայն սարսափահար ամբողջին առջեւ:

Փիղը զոր կը կրթեն, այլեւս չի խորհի իր երկտասարթութիւնը անցուցած վայրերը: Ազատ ալ թէ որ ըլլայ չի դառնար դարձեալ

անապատ և կարօտախորը չղգար մեծ անտառներուն, լայնարձակ դաշտերուն, ուր երբեմն կը ճարակէր պայթելու աստիճան: Մարդէն հրապոյր կը զգայ, հաւատարիմ բարեկամը և աշխատութեանց օգնականը կ'ըլլայ մարդուն:

Սէյլանի, Հնդկաստանի, Հնդկաչինի և Կեդր. Ափրիկէի ընդարձակ անտառներուն և մենութեանց մէջ ես տեսած եմ որ մարդիկ փիղը կը շահագործեն իր ուժովը, մըտացութիւնով և բարութիւնովը, այս մեծամեծ ծառայութեանց փոխարէն անոնց տալով միմիայն քիչ մը սէր և լաւ վարմունք: Մինակ վախնալիք բան մը կայ, փիղը ենթակայ է ինքզինքը կորսնցնելու հիւանդութեան: Անգամ մը որ միտքը խանգարի ոչ մէկ բան կը ճանչնայ այն ատեն, և որովհետեւ զայն զսպելը անկարելի է, ինչպէս ժամանակ մը պատահեցաւ Ժընէվի մէջ, պէտք է թնդանօթի հարուածով զգետնել զայն: Բայց այս կատաղութեան վիճակը այնչափ հազուադիւս է որ մատի վրայ կը համրուի: Յաճախ, խեղճ անասունը երբ իր դատողութիւնը կորսնցընէ՝ անկիւն մը կը քաշուի, կը մերժէ ամէն սնունդ և քանի մը օրէն կը մեռնի: Հնդիկները իրենց բանաստեղծական լեզուով այս պարագային կ'ըսեն թէ ան մեռած է խորտակուած սիրտով:

Այս հիանալի կենդանիին համար պէտք է ջնջել բնազդ բառը, որովհետեւ ան կը յիշէ, կը հասկնայ, կը տրամաբանէ, կը զուգակշռէ, գաղափարներ կը պատշաճեցնէ և կը լրացնէ իմացականութեան հիմը եղող դատողութիւնը և բաղդատութիւնը: Իրականութեան մէջ, ըլլայ ֆիզիքական ուժի, ըլլայ իմացական ուժի տեսակէտով, առիւծը չա'տ տկար կը մնայ փիղին քով: Թէեւ սկիզբէն անասուններու գլխաւորը դաւանած են առիւծը, բայց այսօր գիտու-

թիւնը կը ջնջէ այդ պատիւը, որովհետեւ առիւծին քաջութիւնը կոյր և անտրամաբան վայրագութիւն մըն է և իր վեհանձնութիւնը՝ զգացական տկարութիւն մը: Մարդէն ետք, իմացականութեան տեսակէտով փիղը կը բռնէ առաջին տեղը բնութեան մէջ:

Պատմութեան մէջ անգամ կը հանդիպինք փիղերու անբաղդատելի աշխատութեան: Ջայն կարելի է գործածել ամէն բանի և լաւագոյն կերպով:

Եւրոպացիներուն նորորինակ վաճառքները Ափրիկէի սեւերը փորձութեան ենթարկեցին և փոխարէն տալու համար փողոսկր, որ կը պահանջուէր աւելի, անոնք ամէն միջոց, ամէն զոհողութիւն կ'ընեն ձեռք ձգելու համար անասուններու այս հըսկան: Սուտանի և Նիկրիթիոյ կողմերը որսը այնքան շատցաւ որ խեղճ անասունները սկսան աւելի խորերը, անմարդի վայրերը փախչիլ: Բնիկները ձեռք ձգելու համար ուժ, ալլագոյն կերպաններ և վառօդ, աւելի կը նախընտրեն սպաննել փիղը իր ժանիքին համար, քան զայն ձեռք ձգել աշխատցնելու մտք:

Միւս կողմէ սակայն Հնդկաստանի մէջ փիղը բացարձակապէս պաշտպանուած է օրէնքով և բարքերով, որովհետեւ ան երկրին մեծ գրաստն է: Այնքան կ'ընտանեանայ որ կը մանէ մեր ճաշարահներուն մէջ, սպասները կը ժողլէ, կը մտնէ խոհանոց ուր կը ճաշակէ մենէ առաջ և հանդարտ մը ... շահատակութեան կելլէ հոս հոն: Ժամանակաւ, Հնդկաստանի մէջ փիղ մը սպաննողը մահուան պատիժի կ'ենթարկուէր: Յորմէ հետէ Բաճանները և Պրահմանները իրենց զօրութիւնը կորսնցուցին և Եւրոպացիք տիրեցին, հոն ալ սկսաւ հալածանքը փիղերուն դէմ և Անգլիացիք ձիարշաւներու, պօքսի, աքլորամարտի և ուրիշ խաղերու մէջ մոցուցին նաեւ փիղին մարզանքը:

Այսպէս, Հնդկաստանի փիղերն ալ Ափրիկէի մէջ եղածին պէս վայրագութեանց կ'ենթարկուին և իրենց ցեղը կը նուազի:

Չեմ հասկնար ինչո՞ւ այս անհամակիր պայքարը անանկ կենդանիի մը հանդէպ, որ հսկայ աշխատութիւններու կուգայ և

կրնայ մեծ ծառայութիւններ մատուցանել թէ՛ ռազմական, թէ՛ վաճառականական և թէ՛ ճարտարարուեստական տեսակէտով:

Ափրիկէի փիղերուն բարքերը աւելի շահեկան են ուսումնասիրութեան, և ես անոնց հանդիպեցայ Ենդուերու երկրին մէջ կատարած այս ուղեւորութեանս ատեն: Մեր այցելած այս երկրը պահած է իր անթափանցելի անտառները որոնք նպաստաւոր պատասպարաններ են այդ մոռացի անասուններուն զարգացման համար:

Ինչ մը իրենց բարքերէն. — Ամենափոքր խուճապի մը ատեն, իրենց գլխաւորը ճիւղ մը կ'արձակէ զոր լաւ կը ճանչնան միւսները: Անմիջապէս, փոքրիկները իրենց մօր առաջնորդութեամբ կեդրոնը կը ղետեղուին, մայրերը կը շրջապատեն զանոնք և արունները վերջին շարքը կը կազմեն: Ըլլա՛յ թշնամիին յարձակման սպասած ատեննին, ըլլայ առաջ խաղալու համար, այս դիրքէն չեն խախտիր:

Փիղերը ցեղեր ունին և իրարու թշնամի: Պօրկուր և Եւրիպայի լայնարձակ անսպասները յաճախ անոնց պայքարին թատերաւայրը կ'ըլլան: Կռիւր ահուկի է. մեծղի ծառերը եղէգներու պէս օդին մէջ կը թռչին շառաչելով, անտառը կ'որոտայ կուռաբարներուն աղմուկէն, վիրաւորները և ըսպաննուածները կը ծածկեն դետինը, քանի մը ողջ մնացած արունեթ ինքզինքնին կ'ազատեն անտառին թանձրութեանց մէջ և յաղթական փիղերը գերի կը վարին պարտեալներու ընտանիքները և պղտիկները:

Պատիժները կը տնօրինուին գլխաւորին կողմէ անհնազանդներուն դէմ: Յաճախ պղտիկ փիղ մը դպրոցականի պէս պոռալով պոռչտալով պատիժի խարաղաններ կ'ընդունի ծերունիներուն կողմէ, իբր անհնազանդ:

(Շարունակելի)

ԱՐՏՈՒՄԱՏԵՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի Գաւաթի քիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐԶԵՐԻՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԻՐՄԵՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տուկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբը չահած է բոլոր իրեն գիւմուլ յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց բէրրիւններու և տղայոց չիք և դիմացկուն փոքրիկներու ճոխ միտերք մը պատրաստ ունի, որ չերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից.

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրէ է. Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին.

45—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան, վրայ չեն ելներ, գոյներնին չեն նետեր, ջուրի և անձրեւի կը դիմանան, մլուկները կը ջնջեն և չն. և չն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 10—15 փարայ.

Ներսի և դուրսի ներկերուն իւրաքանչիւր քառ. արշընը 20—30 փարայ:

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախորդաց դիւրութեան համար, վաճառատունս պատրաստ է աոյն գնեցող իր վերայ առնել ամէն գործ, թէ ներկն և թէ գործաւորոյցիք մէջն ըլլալով:

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-Համամ, Պազըր-ճըլար թիւ 26, Գ. Աճէմեան: — Գաւառները գործակալներու պէտք կայ, դիւրամատչելի պայմաններով:

10—20

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԷՅԵՐ

Կ. Պոլիս, Պահճե Գաբու, Ճեղա-Պեյ խան, քիւ 10

Ա Ն Տ Ե Լ Ի Պ

Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ո Ր Ա Բ Ա Ր



Փօնօկրաֆի Եւ Գլաններու Կրամֆօնի
Եւ Երկկողմ Բլագներու, Կեղրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքի
Էֆենտի կից, Եալտըզ խանի տակ
քիւ 2 : Մասնաճիւղ Պահճե Գաբու
քիւ 52 :

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանայ տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համա-
ւը բաղմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆօններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանայ հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ : Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ :

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին :